ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի որոշում 2021թ. հուլիսի 8-ի № 7 նիստի

ՀՀ ԿԳՄՄՆ «ԱՐԱՐԱՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի
Մարդկային ռեսուրսների կառավարման համակարգի զարգացման

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

Ղեկավարվելով **ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի** կանոնադրությամբ՝ կառավարման խորհուրդը որոշում է.

1. *Հաստատել ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի պետական քոլեջի» ՊՈԱԿ-ի Մարդկային ռեսուրսների կառավարման համակարգի զարգացման հայեցակարգ*

2. *Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:*

ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի
նախագահ՝ Ա. Գրիգորյան

Հաստատված է ՀՀ ԿԳՄՄՆ ԱՊՔ
մանկավարժական խորհրդի
2021թ. հուլիսի 7-ի N 9 նիստում
ԱՊՔ մանկավարժական խորհրդի
նախագահ՝ Է. Գ. Գասպարյան

ԱՐԱՐԱՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Արարատի պետական քոլեջի (այսուհետ՝ ԱՊՔ) մարդկային ռեսուրսների կառավարման համակարգի զարգացման հայեցակարգի (այսուհետ՝ հայեցակարգ) հիմնական նպատակն է սահմանել ԱՊՔ մարդկային ռեսուրսների կառավարման համակարգի զարգացման ուղղությունները, իրականացվելիք բարեփոխումների առաջնահերթությունները, տեղական և միջազգային արդի փորձին համապատասխան սահմանել ԱՊՔ - ում մարդկային ռեսուրսների կառավարման համակարգի հիմնական սկզբունքներն ու չափանիշները և իրականացվող միջոցառումների ժամանակացույցը:

2. ԱՊՔ մարդկային ռեսուրսների կառավարման համակարգը ներառում է.
ա/ ԱՊՔ աշխատողների աշխատանքի ընդունման և ազատման գործընթացը,
բ/ ՀՀ օրենսդրությամբ և ԱՊՔ ներքին իրավական ակտերով նախատեսված աշխատողների անձնական տվյալների վարումը, համապատասխան հրամանների, պայմանագրերի և այլ փաստաթղթերի ձևակերպումը, մարդկային ռեսուրսների կառավարման տեղեկատվական համապատասխան համակարգերի շահագործումը,
գ/ պաշտոնի անձնագրերի, աշխատանքի նկարագրության և աշխատողի պարտականություններն ու իրավասությունը սահմանող իրավական այլ ակտերի նախապատրաստումներն ու ընդունումը,
դ/ մասնագիտական զարգացման գործընթացը (կարիքների գնահատում, վերապատրաստումներ, զարգացման այլ միջոցառումներ),

ե/ աշխատանքի արդյունավետության գնահատումը,

զ/ աշխատանքի վարձատրության, պարգևատրման, պաշտոնեական առաջխաղացման, արձակուրդների ձևակերպման հետ կապված խնդիրները,

է/ ներքին կարգապահական կանոնների և էթիկայի կանոնակարգի դրույթների խախտման հետ կապված հարցերի լուծումը,

ը/ աշխատողների խրախուսման ու նրանց նկատմամբ կարգապահական տույժերի կիրառումը,

թ/ գործատուի կողմից տրամադրվող սոցիալական լրացուցիչ երաշխիքների ապահովումը և այլ հարցեր:

2. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՆ

ԱՊՔ – ում սահմանվում են կառավարման հետևյալ սկզբունքները.

ա/ թափանցիկություն և հաշվետվողականություն,

բ/ կոլեգիալ որոշումների կայացում,

գ/ մրցունակություն և համագործակցային մոտեցում,

դ/ արդարացիություն և անկողմնակալություն,

ե/ մասնագիտական զարգացում:

3. ԱՊՔ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

4. **ԱՊՔ** մարդկային ռեսուրսների կառավարումն իրականացնում է մարդկային ռեսուրսների կառավարման խորհուրդը՝ ԱՊՔ ներքին իրավական ակտերին ՀՀ համապատասխան, ինչպես նաև համապատասխան ստորաբաժանումների ղեկավարները:

ԱՊՔ ՄՌԿ գործընթացը համակարգում է ԱՊՔ տնօրենը:

5 . **ԱՊՔ** մարդկային ռեսուրսների կառավարման խորհուրդի հիմնական խնդիրներն են ՀՀ օրենսդրությամբ և ԱՊՔ ներքին իրավական ակտերով նախատեսված մարդկային ռեսուրսների կառավարմանն առնչվող գործառույթների

իրականացում, ԱՊՔ մարդկային ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացումն ու մարդկային ռեսուրսների կառավարման համակարգի բնականոն աշխատանքի ապահովումը:

6. ԱՊՔ մարդկային ռեսուրսների կառավարման խորհուրդն

ա/ ապահովում է ՀՀ օրենսդրությամբ և ԱՊՔ ներքին իրավական ակտերով նախատեսված աշխատողների աշխատանքի ընդունման (ներառյալ՝ համատեղությամբ և ժամավճարային հիմունքներով աշխատանքի ընդունման) և ազատման գործընթացի հետ կապված փաստաթղթերի ամբողջ գործընթացը (փաստաթղթերի ընդունում, հրամանների, պայմանագրերի և նախագծերի պատրաստում և այլն),

բ/ ապահովում է մրցութային կարգով մանկավարժների աշխատանքի ընդունման հետ կապված գործընթացը (հայտարարությունների տարածում, փաստաթղթերի ընդունում, ուսումնասիրություն և այլն):